



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

29

*Համալսարանական*

# ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ


Ա.Ռ.

ԸՆՏՐՈՂՍ



— 1871 —

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



9(47.925)

Ը-95

9



4391-56

8

2004

25259-4.3

# ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

## ԱՌ ԸՆՏՐՈՂՄ ԻՄ


ինչպէս երեսփոխանական ժողով մը խմբովին, նոյնպէս երեսփոխան մը առանձին պատասխանատու է իր պաշտօնավարութեան մէջ զինքն ընտրողաց առջև: Այս պատասխանատուութիւնը թէպէտ բարոյական, բայց ո՞վ պիտի մեղադրէ և ի՞նչպէս՝ եթէ երեսփոխան մը զանի նիւթապէս ընել ուզէ արտառոց պարագայի մը մէջ կամ մանաւանդ երբ ծանր դէպ մը ստիպէ զինքը երեսփոխանութենէ հրաժարելու:

Չայս համարատուութիւնը պարտաւոր եմ ընելու, և պիտի ընեմ ազատաբար և անկեղծապէս ազգային ամենամեծ խնդրոյն վրայ, որ է Սահմանադրութեան վերաբրնութիւնը: Բայց խնդիրը կիրառական է իր դժբախտ պարագաներովը, և քննութեան հետեանքը գուցէ շահաւոր չըլլայ Ընդհ. ժողովին. ուստի ամենայն կիրք անձնական և ամենայն թագուն խորհուրդ պէտք է ի բաց դրվին երկու կողմէն՝ թէ խօսողին և թէ լռսողին. ապա թէ ոչ՝ դատաւարական կարողութիւնք կ'ըսքողին երկուստէք և կ'ըսկրսինք պղտոր տեսնել ամենայն լոյս և ճշմարտութիւն:

Պիտի տեսլի որ ես իմ կողմէս ամենայն սիրով պիտի խօսիմ. Ընդհ. ժողովին մէկ որոշումը քննելու հա-

մար՝ անոր բոլոր ընթացքը չը տի քննադատեմ. և խնդիրն իսկ իր ամեն կողմէն չը տի զննեմ, այլ քանի մը կողմէն միայն՝ ճիշդ որքան որ պէտք է ինձի իմ համարատուութեանս համար և զիմ բողոքս արդարացնելու չափ իմ ընտրողացս առջև. լեզուս չ'է՛ որ խօսի այլ խիղճըս ու համոզումս. քու և իմ դործին վրայ չ'է՛ որ խօսի, այլ որչափ սիրելի այնչափ խեղճ ու անտերունչ ազգի մը դործին վրայ, որ իր ճակատագիրը այսօր մէկ հատիկ ժողովի մը ձեռքն է աւանդեր:

Չեմ կրնար խնդրոյն պատմութիւնը իր ծագումէն առնուլ և գալ հասնիլ մինչև ցայն կէտն ուր հասած է այսօր: Խնդիրը ժողովին քսանմէկերորդ այսինքն՝ ապրիլ 9ի նիստին մէջ պիտի բռնեմ ուր բացուեցաւ խկապէս անջրպետ ժողովականաց մեծագոյն մասին և մեր մէջ. և իմ ընթերցողքս հետամուտ՝ ընդ իս ընթերցած պիտի ենթադրեմ ատենադրութեանց մէջ զայն ամեն այլակերպութիւնքը զոր կրած է խնդիրը մինչև հոն: Հոն վերաքննութեան խնդրոյն վրայ քու էտարկութիւն եղած ատեն, երբոր ժողովականք յսկանէ անուանէ կուչեալ քրէնին կուտան, ես իմ կողմած ատեն՝ իբրև քրէտ սա խօսքը կ'արտասանեմ՝ «Ես կամաչեմ մաս-



նակցելու այդ քրէտարկութեան , զոր ոմանք լաւ չը լսելով պարտաւորեցին զիս կրկնելու սապէս «Ես կ'ամչնամ քրէտ տարու» : Ահա այն քսանմէկերորդ նիստին մէջ իմ տըւած քրէտս իմ այս խօսքս էր , զոր ժողովէն ոմանք թշնամանք համարելով ջնջել ու անհետացնել ուզեր են քսանմէկերորդ նիստին մէջ այսինքն 14 օր ետքը , փոխանակ բացատրութիւն ուղեւ իմ խօսած պահուս կամ ետքը և ըստ այնմ վարվելու եթէ թշնամանք էր իրենց՝ այս խօսքս :

Թշնամանք համարողները իրենց յայտարարելով պահանջներն արդարացնելու ուրիշ ելք չը տեսնելով , աւելի այն խօսքս ուղեր են բռնել զոր ըսի ՚ի պատասխան Տ. Ամբրոսիոս վարդապետին , որ իմ առաջին խօսքիս պատասխանեց՝ «Այսքան քրէտարկուաց մէջ մէկ ամաչող մ'ալ պէտք է» ըսելով , և ինէ անմիջապէս սա բնական պատասխանն տուաւ՝ «Այո՛ , այսքան չ'ամաչողաց մէջ (ըսել կ'ուզէք) միակ մէկ ամաչող խիստ շատ է և աւելորդ իսկ» : Եւ զայս վերջին խօսքս չը լսած կ'ուզեն ըլլալ , իբր թէ չըսած ըլլալով յատենի՝ ատենագրութեան մէջ ետքէն աւելցուցած ըլլամ , կամ իբրև մասնաւոր խօսակցութիւն երկու անձանց մէջ անցած՝ անտեղի կ'ուզեն համարել ատենագրութեան մէջ յիշվել :

Նախ՝ ինչպէս մասնաւոր կրնայ համարուիլ խօսք մը որ սրճարանի մէջ չէ այլ Ազգային ժողովի մէջ . ինդրէն դուրս չէ այլ բուն իսկ բացված ինդրոյն ոգւոյն այսինքն քրէտարկութեան վրայ . միջանկեալ

կերպով չ'է իբրև բացառանշուծիւն մը խօսից կարգէն դուրս , այլ երբոր պաշտօնապէս կոչված և խօսքն իմն է յատկապէս և մի և նոյն խօսքիս շարունակութիւնը : Երկրորդ՝ եթէ այս վերջին խօսքս շատեր չը լսեցին , յանցանքն իմն չ'է , և ապացոյց մը չէ իմ չըսած ըլլալու : Եթէ չը լսողներ կան , լսողներ ալ կան , և նոյն իսկ ինձի պատասխանող անձը ունի արժանապատուութիւն իր լսածը չ'ուրանալու , չ'եմ կասկածիր . ուստի չ'ըսված խօսք մը չէ զոր ետքէն մտածելով աւելցուցած ըլլայ ատենագրութեան մէջ ատենագրիւր , ինչպէս որ ոմանք առանց բացատրութիւն անելու՝ խոնարհեր են անպատկառ այս ձրի զրպարտութեան : Հոգ չ'է ինչպէս որ կ'ուզեն թող ըմբռնեն , Բայց ինչ հարկ կայ այս երկրորդ խօսքը բռնելու որ ինձի համար պէտք չ'ունէր , և եթէ չը պատասխանվէր ինձի , չ'էի պատասխանէր միթէ այն սրատես անձինքը չ'ե՞ն նշմարեր մի և նոյն իմաստը՝ զօրութեամբ պարունակեալ՝ իմ առաջին խօսքիս մէջ , զոր չը լսող կամ ուրացող չը կրնար ըլլալ , որովհետեւ՝ չը լսեցինք ըսելով՝ երկու անգամ կրկնել տուին , որոյ վրայ կը պնդեմ և զոր պիտի բացատրեմ :

Առ ոչինչ գրելով ատենագրութեան դէմ յարձակմունքը որ հասարակութեան օգուտ մը չ'ունին , և բուն ինդրոյն չը մտած՝ քրէտարկութեան մէջ մեծ անտեղութիւն մը տեղի ունեցաւ , իշայն պէտք է նախ յիշեմ յօգուտ հասարակաց և բերեմ ՚ի ծանօթութիւն համայն ընտրողաց , և է սա .

քրէտի դաղանութիւնը ընտրութեանց մէջ միայն պահանջելի է որքանձի վրայ կ'ըլլան , իսկ վիճեալ ինդրոց վրայ քրէտն ընդհանրապէս յայտնի պէտք է որ ըլլայ , որպէս զի ազգը կարենայ գիտնալ թէ իր երեսփոխաններն ինչ կարծիքի տէր են . ասի մեծ կարևորութիւն ունի և ապագայ օգուտ : Թէև երբեմն Գաղտնի կ'ըսկըսի քրէտարկութիւնը՝ որպէս զի իրարու ազդեցութեամբ ընդ քարշ բերեալ չը մոլորին քրէտները , բայց քրէտուղթներն ստորագրեալ ըլլալով՝ քրէտհամարի մէջ իսկոյն կը յայտնվին կարծիքները :

Եթէ ճշմարիտ է որ ընտրողն իրաւունք ունի գիտնալու թէ ինչ է իր ընտրեալին կարծիքը , արդեօք այս իրաւունքը պարտք չ'ըրնէր ընտրեալին վրայ իր կարծիքը յայտնելու : Ե՞րբ և ո՞ւր պիտի ճանչէ ընտրողն իր ընտրեալը և զանի դատէ , եթէ ո՛չ իր կարծեացը մէջ , եթէ մէկը վախ մը կամ անյայտնելի նկատողութիւն մը չ'ունի , և հաստատ է իր կարծեաց վրայ և կարող զանի պաշտպանելու , ինչ հարկ զանի թագուռն պահելու երբ զանի գիտնալու փափաքող և մասնաւանդ իրաւունքունեցողներ կան : Ասի չընելը պահվտիլ մըն է , որ եթէ չ'ունի արդարանալու պատճառ , պարտագանցութիւն մըն է երեսփոխանին կողմէն իր ընտրողացն առջև : Ահա այս իմաստով էր որ ինդրեցինք Ատենագրետ էֆէնտիէն որ քրէտարկուաց կարծիքը յայտնի պահանջէ զոնէ քրէտարկութեանն ետքը պաշտօնապէս դիւանին կողմէն , ինչպէս որ և ե

ղաւ . բայց երեսփոխանք չը պատասխանեցին Ատենագրետին հրահրին :

Ինչ և իցէ անցնինք այս կէտը՝ իւրաքանչիւրին իրաւունքն ու պարտիքը իրեն գիտակցութեամբ թողլով , հասնի՛նք մեր պարտեաց և մենէ պահանջված բացատրութեանց , թէ ինչո՞ւ ես փոխանակ քրէտ տալու՝ զայն խօսքն արտասանեցի որ լուի բայց ծանր բողոք մըն էր այն կատարված քրէտարկութեան դէմ , և դառն «իդի» մը ընդհ. ժողովին ընթացքին՝ և ո՛չ թէ թշնամանք զանի կազմող անդամոց , բնական զգացում մը՝ նոյն ընթացքէն ազդեցեալ , զոր մարդ ինչպէս ազատ է զգալու նոյնպէս ազատ է և յայտնելու երբ մասնաւանդ ազգի մը բախտըն ՚ի խաղ արկեալ է :

Բացատրութեան պէտք կայ և պահանջեալ իսկ է :

Հեռի ինէ ո՛չ թէ զընդհ. ժողովը այլ ո՛չ զոք թշնամանելու դիտաւորութիւնը :

Ժողովը կրնար իմ այս խօսքէս ինքզինքը թշնամանեալ համարել , գիտէ՞ք . ե՞րբ . — Երբոր ինքզինքը այնպիսի անօրէն բռնաւորի մը տեղ դնէր որոյ առջև ներելի չ'է երբէք իր գործոց վրայ ակնարկ մը , դիտողութիւն մը փախցնել , զգացում մը յայտնել անպատիժ , բռնաւոր մը վերջապէս՝ որոյ միակ իրաւունքն իր նիւթական ոյժն ըլլար :

Եթէ երբէք զայս դերը կրնայ ընդունիլ ժողովը , թո՛ղ ես այնպիսի բռնաւոր մը թշնամանելու փառքն ունեցած ըլլամ և իմ յանդգնութեանս ու անոր ցասմանը զոհ երթամ : Իսկ եթէ ո՛չ , և եթէ

զանի այս դէմքով երևակայելս իսկ թշնամանք է իրեն, ապա ուրեմն որչափ հեռու է այս դերէն այնչափ շուտ թող մէկդի դնէ թշնամանք բառը որ կիրքէ միայն թելադրեալ է: Եթէ իրաւ է որ երեսփոխանութիւնը պաշտօնաւորութիւն մըն է, պատուիրաւութիւն մը՝ պատասխանատու իր պատուիրատուաց առջև, և իր վարմանքը ազգայնոց քննադատութեանը ենթակայ, թող ներէ ինծի իր պարտաւորութեան հանգարտ զգացմամբը, որ բացատրեմ իրեն թէ ինչու ես այս զգացումն ունեցայ:

Մէկ խօսքով ըսեմ՝ և յետոյ բացատրեմ: Այո՛, ամէցայ մասնակցելու այն քրէարկութեան որ ըստ իս անխմատ է և չ'ունի ամենեին նշանակութիւն, և որոյ արդիւնքը սարսափելի հակասութիւն և կըրճիմներ պիտի բերէր ժողովին գըլխուն և հետևաբար ազգային գործոց ընթացքին մէջ: Ժողովն իսկոյն բացատրութիւն չ'ուզեց ինէ և չը տուի, բայց այս խորհուրդս չը պահեցի ատենապետէն քրէարկութեան սկիզբը և դեռ իմ քրէիս կարգը չ'եկած յայտնեցի իրեն:

Քննե՛նք ուրեմն կարճառօտ՝ քրէարկեալ խնդիրը, քրէարկութեան արդիւնքը, և տեսնե՛նք ինչ որոշեց:

Նախ, ո՞ր սկզբան հետեւելով որոշելու է քրէարկելի խնդիր մը, կամ աւելի պարզ ըսենք, ո՞ր խնդիրն է որ քրէի կրնայ դրվիլ ժողովի մը մէջ և ո՞րն է որ չը կըրնար դրվիլ: — Օրէնք ընդհանուր՝ ամենայն խնդիր որ ըստ կանոնի

քննված է ժողովականաց ազատ դիտողութեամբը ու բաւական վիճված՝ կրնայ քրէի դրվիլ: Բայց սկզբունք միակ՝ այն խնդիրները միայն՝ զորս ժողովն իրաւունք ունի այսպէս կամ այնպէս տնօրինելու, մերժելու կամ ընդունելու: Քրէարկելի կէտերը ընդհանրապէս երկու հակառակ և անորոշ կէտեր են, զոր ժողովն իր քրէովը պիտի որոշէ. մէկուն համար այ՛ ըսողը միւսին համար ոչ ըսած պիտի ըլլայ: Ենթադրե՛նք թէ՛ կէտին մէկը արդէն ազդովին ընդունված կամ քու իրաւունքէդ վեր կէտ մ'ըլլայ, և միւսը՝ թէպէտ անորոշ, բայց դու զանի մերժելու դեռ իրաւունք չ'ես ստացած՝ զի դեռ չ'ես քննած, ի՞նչ հետևութիւն կ'ունենայ քրէարկութիւնդ, զի քրէարկութեան մէջ երկու կէտն ալ մերժելու իրաւունքիդ սահմանին մէջ պէտք է որ ըլլան. ապա թէ ո՛չ՝ չ'ես կարող ո՛չ մէկը և ո՛չ միւսը մերժվելու վտանգին ենթարկել:

Եթէ այս պայմանին մէջ չ'ըլլալով՝ առաջին կէտը մերժվի, ի՞նչ կ'ըլլայ քրէարկութեան հետևութիւնը. անշուշտ յանդգնութիւն մ'ըրած կ'ըլլաս քու իրաւունքէդ վեր ձեռնարկութեամբդ և անոր արդիւնքը քեզ կը խորտակէ: Իսկ եթէ այս կէտն ընդունվի բայց միւսը մերժվի, ի՞նչ է դարձեալ քու որոշմանդ հետևանքը, եթէ ոչ մէկ կողմէն ծիծաղական՝ զի ընդունածը քու ընդունելութեանդ կարօտ չ'է և քեռէ վեր զօրութիւն մը արդէն ընդունած է, և միւս կողմէն անխրախ՝ զի մերժածդ մեր-

ժելու իրաւունքիդ սահմանին մէջ հասած չ'է դեռ: դարձեալ նոյն արդիւնքը կուտայ, քու յարգդ ու պատկառանքդ կը ջնջէ ու քու իշխանութիւնդ կը փշրէ:

Պարզ օրինակով մը աւելի աչքի կը զարնէ սոյն սկզբան ուղղութիւնը, բայց ո՛չ ժամանակն ու անողջութիւնս կը ներեն երկար գրելու և ո՛չ իսկ հարկ կը տեսնեմ. ընթերցողքս կարող են քիչէն շատ իմաստասիրել: Հասնի՛նք չուտով բուն խնդրոյն, և սոյն սկզբան համեմատ քննե՛նք կատարված քրէարկութիւնն ու անոր արդիւնքը:

Քրէթուղթները սա երկու բառերուն մէկը կամ միւսը պիտի կըրէին. Սահմանադրութիւն, կամ Ծրագիր, այսինքն կամ ներկայ Սահմանադրութիւնը որ է 63 ինք, կամ ազգային ժողովէն ընտրեալ վերաքննիչ Յանձնախումբին պատրաստած Ծրագիրը. և ասոր բացատրութիւն ալ տրվեցաւ ու ըսվեցաւ որ վերաքննութիւնը Սահմանադրութեան վրայ ընել ուղղները Սահմանադրութիւն գրեն քրէթուղթնուն վրայ, և Ծրագրին վրայ ընել ուղղները Ծրագիր գրեն: Ասով ալ դարձեալ գոհ չ'եղվեցաւ. հեռատես և ուղղասէր ժողովականին մէկը դիտել տուաւ և այնքեց թէ բացատրութիւնը թերի է, և թէ պէտք է քրէարկուք առաջուց դիտան որ Սահմանադրութիւն գրողները՝ իբր թէ Յանձնախումբին գոյութիւնը և անոր Ծրագիրը մերժած ըլլալով, 3, և տարի ետ դարձած պիտի ըլլան, և վերաքննութեան ձեռնարկութիւնը՝ ըստ ներկայ Սահմանադրութեան տառին՝

նորէն սկիզբէն սկսել որոշած պիտի ըլլան, այսինքն՝ 20 հոգիէ քաղաքական նոր ժողով մը կազմելով, նոյնպէս կրօնական, Տնտեսական, Ուսումնական, Ելմտական խորհուրդներ և մասնաւոր հոգաբարձութիւններ վանօրէից, կապակց, և ին. և ին. և ասոնց մէջէն առնելով 20 հոգիէ բաղկացեալ վերաքննիչ նոր յանձնախումբ մը կազմելով. ըսել է՝ մինչև հիմա եղածները ապօրինաւոր համարած պիտի ըլլան: Չայս բացատրութիւնը դիւանն ալ ընդունելով, Ատենապետը հրատարակեց ժողովականաց թէ ասի բնական հետևանքն է ըստ ներկայ Սահմանադրութեան վերաքննութիւնը պահանջելուն և ի՞նչ հարկ կայ բացատրութեան. ըսել է որ վերաքննութեան յօդուածը պիտի կատարվի նոյն Սահմանադրութեան մէջ և ըստ այնմ կետ առ կետ պիտի տնօրինվի:

Այս բոլոր ազդարարութիւններն ու բացատրութիւնները տրվելէն ետքը՝ քրէարկութիւնը կատարվեցաւ, և մեծագոյն քրէ ըստաղաւ Սահմանադրութիւնը: Ասի կը նշանակէ բնականապէս թէ ժողովը տարիներով ետ դարձուց ազգային ամենակարևոր ստիպող գործը, և վերաքննութեան համար Ազգին տարիներով թափած ճիշդ ու քաշած համբերութիւնները ոչնչացուց մէկ րոպէի մէջ: Գուցէ և տարիներ պէտք պիտի ըլլան գործը դարձեալ այսօրեայ վիճակին բերել հասցընելու համար: Բայց ո՞վ պիտի տուժէ այս բազմամեայ յապաղման երեսէն Ազգին քաշած վնասները. ո՞վ — դարձեալ խեղճ Ազգը. զի

ժողովականաց անձնական գործը  
չէ ետ մնացողը , ասոնք դարձեալ  
հանգիստ տուներին կը քաշվին :

ժողովուրդը կը հարցնէ անձկու-  
թեամբ .

Ի՞նչ եղաւ մեր Սահմանադրու-  
թեան վերաքննութիւնը :

ժողովը կը պատասխանէ հան-  
դարտութեամբ .

Ետ դարձաւ :

— Ինչո՞ւ .

— Վասն զի այս վերաքննիչ յանձ-  
նախումբը 20 հոգիէ չէր բաղկաց-  
եալ , և անոր անդամները ժողով-  
ներէ և խորհուրդներէ ծաղկաքաղ-  
եալ չէին առնված ըստ ճիշդ տա-  
ռին Սահմանադրութեան :

— Ո՞ր Սահմանադրութեան .

— Այն՝ որոյ սրբագրութեան  
պէտքը տեսնված և այսօր վերա-  
քննութեան տակ է :

Գիտե՞ս ինչ բնական ու աննա-  
հանջելի արգիւնք ունի այդ պա-  
տասխանդ այն հասարակութեան  
վրայ , որ հոգին բերանը դուրսը ան-  
համբեր քեզի կ'ըստասէ , ակնկա-  
լութիւնը քու վրայ է դրած . —  
Յուսահատութիւն :

Եթէ գուժ ունիս այն գաւա-  
ռաբնակ ազգայնոց վրայ , ինչպէ՞ս  
խլացար այն հեծեծանաց որոց ար-  
ձագանք դեռ կը թնդացնեն ժո-  
ղովարանիդ կամարները : Եթէ ի-  
րաւ է որ ամեն գաւառներէ և ա-  
մեն թաղերէ՝ այլ և այլ եղծմանց  
ու անկարգութեանց և անտանելի  
վշտաց դէմ դարման հայցող ձեռ-  
քեր կը կարկառին առ քեզ , օգ-  
նութիւն գոչող ձայներ կը բարձ-  
րանան առ քեզ . և եթէ իրաւ է  
նաև որ Սահմանադրութիւնը դար-

ման մը պիտ' ըլլայ անոնց , ո՞ւր է՝  
չ'ըսեմ ազգասիրութիւնդ , այլ մար-  
դասիրութիւնդ : Դարմա՛ն տարնախ  
ստիպող տառապանաց , յետոյ բըն-  
տրուէ քեզի համար՝ եթէ իսկապէս  
յարեալ ես՝ այդ սնտոի տառական  
ճշդութիւնքն ու այդ արտաքին  
անպիտան ձևերը :

Նմանեցաւ ազգին առջև Ընդհ.  
ժողովն իր այս որոշմամբը՝ ճիշդ-  
այն պատմեալ օրինամովն , որ գե-  
տեցերը ճեմած ատեն կը տեսնէ  
մարդ մը եղբրքին մօտ յորձանաց  
մէջ , որ խեղդվելու վտանգի մէջ  
ձեռքերը վեր առած օգնութեան  
կը գոչէ շնչասպառ : Կանոնամօրն  
'ի պատասխան ըստ կանոնի յանձ-  
նարարական նամակ մ'ունիս ինձի  
ներկայանալու » կ'ըսէ , եթէ ո՛չ՝  
չեմ կրնար քու ձեռքդ դպչիլ .  
ըսելով կը թողու կ'անցնի և խեղ-  
ճը յուսակատար կ'ընկերդի կ'երթայ :

Ես քու պատուոյդ համար , Ընդ-  
հանուր ժողով , որ ալ գայի մակա-  
նուն կը կրես , ամէցայ սոյ՛ն և խոր-  
շեցայ այն քրէտարկութենէն որ  
այդ արգիւնքը կրնար ունենալ և  
ունեցաւ . խորշեցայ քեզի հետ մի-  
անալու այդ յուսահատութիւնը ազ-  
գիս տալու , և զայս զգացումս քե-  
զի յայտնել համարձակեցայ , և  
դու կ'ուզես ատենադրութիւն ջըն-  
ջել , ազգին պատմութիւնը նեն-  
դել , ձայնը բերնիս մէջ և զգա-  
ցումը սրտիս մէջ խեղդել . ինչո՞ւ  
— վասն զի ազգիս սիրոյն համար՝  
քեզի աչառութիւն չ'ըրի և զգա-  
ցումս չը զսպեցի . վասն զի այս ձայ-  
նը , այս խղճի աղաղակը պատմու-  
թեան առջև քու փառքերդ պի-  
տի աղօտացնել : Ո՛վ չը ցանկար

չ'ուզեր քու փառքդ երբ դու ազ-  
գային ես , բայց յանցանքն իմս  
չէ՛ եթէ այս զգացումն ունեցայ  
քու ընթացքիդ վրայ , դու ազդե-  
ցիր ինձի . յանցանքն իմս չէ ե-  
թէ դու ալ չ'ըզգացիր ինձի հետ ,  
բաւական աղաարարութիւն և կան-  
խագոյն բացատրութիւն տրվեցա՛ն  
քեզի :

Գիտեմ , քու որոշմանդ այս իմ  
տուած նշանակութիւնս՝ որ ատե-  
նադրութիւնքդ ուշի ուշով ընթեր-  
ցողաց համար բնականապէս քու  
խօսքերէդ կը ծօրի , դու չը պիտի  
ուզես ընդունիլ , և քաշկուտուք  
մեկնութիւններու պիտի եղնես ,  
բայց ես ամեն մեկնութիւններդ  
պիտի ընդունիմ և անոնց մէջ քե-  
զի հետամուտ՝ ճանապարհին անել  
ըլլալը պիտի ցուցնեմ , զի թիւր  
սկզբունքէ մեկնեցար , անկարելի  
է որ գովելի նպատակի հասնիս :

Բայց ձգե՛նք առ այժմ՝ այս կը-  
տորը , որ որոշմանդ արդեանց կը-  
տորն է , գա՛նք շուտով իրաւանց  
և օրինաւորութեան մասին :

Վերջին ըսելիքս կանխիկ ըսեմ .  
իրաւունք չ'ունէիր քրէտարկեալ կե-  
տէրուն ո՛չ մէկին և ո՛չ միւսին վը-  
րայ , ո՛չ վերաքննութիւնը նորէն  
սկսելու , ո՛չ ծրագիրը մերժելու .  
բայց երկուքն ալ որոշեցիր :

Նախ՝ ո՞ր իրաւամբ ետ դարձար ,  
զայն քննենք , բացատրութիւն չեմ  
սպասեր քու կողմէդ , տուած փաս-  
տերդ դրած են , փառք կիւթեմ  
պէրկայ . զանոնք մի առ մի քըն-  
նելու չը պիտի աշխատիմ , այլ հա-  
րեանցի մը պիտի շօշափեմ միա-  
համուռ : Ետ դարձար , վասն զի  
քենէ առաջ եղածները , նախկին

Ընդհ. ժողովներու ըրած բոլոր ո-  
րոշմունքը ապօրինաւոր էին , ուս-  
տի անոնց ընտրած յանձնախումբը  
ապօրինաւորութեան ծնունդ է ,  
վիժած մին է , անոր բերած ծրա-  
դիրը ճնշման արդիւնք է , պղտոր  
և թունալից աղբիւրէ յառաջ ե-  
կած է : Այս թշնամական բառե-  
րը՝ թէ քենէ առաջ ժողովիդ երես-  
փոխանաց դէմ և թէ անոնց ազատ  
քրէտով ընտրած ազգային պաշ-  
տօնական յանձնախումբին դէմ՝  
քու կի՛նդ են չ'ես կրնար ետ առ-  
նուլ . մամուլն իր ճանկին մէջ ան-  
ցուցած է :

Զգո՛յշ կեցիր , յաղթանակօ՞ղ  
մեծամասնութիւն , չ'ըլլայ թէ այդ  
պղտորութիւնը քու տեսողութեա-  
նըդ մէջ ըլլայ , որ զարեգական պայ-  
ծառութիւնն անգամ աղօտագոյն  
նկարէ քեզի . չ'ըլլայ թէ դրացւոյդ  
ական մէջ շիւղ մը բնտօնելու երած  
ատենդ՝ գերան մը գտնեն քու կի-  
նիդ մէջ . չ'ըլլայ թէ իբրև թշնա-  
մանեալ դատքանալովդ՝ իբրև թըշ-  
նամանօղ դատապարտիս . բայց  
այս ետքի կտորին համար անդո՞րր  
կաց . քենէ այս հաշիւը պահան-  
ջող չը պիտի ըլլայ . քու թշնամա-  
նած անձինքը գիտեն արհամար-  
հել թշնամանքը , զի մաքուր խղճի  
առջև ո՞րքան խոշոր ըլլան թշնա-  
մանք , չե՛ն հասնիր անոր արհա-  
մարհութեան բարձրութեանը .  
վերջապէս զգո՛յշ կեցիր , չ'ըլլայ  
թէ օրինաւորութիւն բնտօնելովդ  
քու ապօրինաւորութիւնդ վճռես .  
եթէ քիչ մ'աւելի ճշգրութիւն դը-  
նենք , դու ալ կը համոզվիս քու  
ապօրինաւորութեանդ վրայ , և ես  
առաւել հասարակաց քան թէ քու

օգտիդ համար կ'ուզեմ որ համոզվիս :

Սա չ'է՞ այդ մեծագոյն մասին ծայրագոյն առարկութիւնը . ոչեմ ուզեր այդ ծրագիրը : վասն զի պիտի հարուածի մը արդիւնք է . ասոր համար չ'է՞ որ ետ դառնալ կ'ուզես այսօր և վերաքննութեան ծանր աշխատութիւնքը ծայրէն նորէն սկսել : Արդ գիտցիր կանխիկ որ այդ ակնարկեալ պատահական եղելութիւնը՝ զոր հարուած կոչել կ'ախորժիս , պետական չ'էր ամենեւին , ուստի այդ ածականը սուտ է և անտեղի քու պաշտօնական բերնիդ մէջ . այլ հարուած կոչածը աղբայնոց ոմանց կողմէն էր , նոյն իսկ ժողովականաց այն ատենի փոքրագոյն մասէն , որ առաւել յարեալ Սահմանադրութեան ոգւոյն քան տառին , ժամանակէն առաջ վերաքննութեան ենթարկել ուզեց զՍահմանադրութիւնը , զի անդործադրելի կէտեր երեան եկան , որք խոչընդոտ եղան վարչութեան ընթացքին : Քաղաքական ժողով չ'էր կրնար հաստատուիլ՝ ընտրեալները հետզհետէ կը հրաժարէին : Ընդհ. ժողովը՝ որ հազիւ կրնար նիստ ընել մեծագոյն մասի պակասութենէն , ընտրողական ժողով դարձած էր և վարչութիւնը կաշկանդեալ : Իրաց սյս վիճակին մէջ և կանոնամոլ մեծագոյն մասի մը առջեւ ազդասիրական եռանդէ դրդուեալ ճար մ'ընել խորհեցան այն անձինքը , միայն ձևին մէջ սխալեցան . տա՛նք որոյն զոհեցին մինչդեռ դուք այսօր օրինամոլութեամբ ոգի'ն կը զոհէք տառին , եթէ երկուքնուդ մէջէն ընտ-

րել հարկը լլայ , նախապատիւ են անոնք , զի ոգին կրնայ միշտ կենդանացնել ըզտառը . իսկ տառն առանց ոգւոյ դի' է միշտ անկենդան : մե՛կ սգմարո՛ւյ . զիսկ զիսկ Սյօրեայ մեծագոյն մասէն՝ անձնական կրիւք չլացեալ ոմանք ուղեցին արատել այն երախտաւոր անձանց՝ անցեալ թէ կենդանի՝ ազգային յիշատակը , բայց ազատախօս ձայն մը բարձրացաւ , հաստատեց անոնց ազգասէր դիտաւորութիւնը , և ի փառս ճշմարտութեան ելից պաշտօնապէս պատմութեան այս պիտոյքը : Ամբաստանել ուզեցին՝ թէ վերաքննութեան ենթարկուիլ այն անձանց ձեռք դադրեցաւ ատեն մը Սահմանադրութիւնը : Որքա՛ն թեթեւ մտածել պէտք է զասի հաւատալու համար . աղվապէրք ոմանք՝ ո՛ր և է նպատակով տարածեցին այս ձայնը , և միամիտք հաւատացին : Ինչպէ՞ս դադրած է Սահմանադրութիւնը , երբ սահմանադրական ժողով մը կայ որ կը շարունակէ առանց լուծվելու և կը գումարովի ըստ հարկին : Յանցանքն որո՞ւ , եթէ դու զանի չը գումարեցիր կամ թէ գումարելու հարկ չը կար : Ո՛ր հարկի մէջ այն ատենի պատրիարքը ժողով գումարելու հրաման խնդրեց Բ. Դրոնէն ու չը տրվեցաւ : Կայսերական վեհապետ մը հաստատեց Սահմանադրութիւնը , ելա՞ւ վեհապետ մ'ալ զանի դադրեցնող : Բ. Դրան համար ի՛նչպէս դադրած կ'ըլլայ երբ ծրագիր մը կը յանձնէ սահմանադրապէս կազմեալ ժողովոյդ քննութեանը , երբ պատրիարք

մ'ընտրել կը հրաւիրէ ըստ սյս կամ այն յօդուածոց սահմանադրութեանդ : Եթէ չը յիշեր , մոռցած է կ'ըսես դադրեցուցած ըլլալը , կամ չէ նէ՛ դու միայն չ'ես մի զանի դադրեցնող կամ դադարեալ համարողը :

Այս ամեն պատճառք կ'ապացուցնեն ըստ իս՝ թէ պետական ըսվելու հարուած չը կայ , թէ ազգայնոց ոմանց ձեռք ձևին մէջ գոյ ծված այն պակասութիւնը՝ եթէ ապօրինութիւն էր՝ օրինաւորութեան փոխվեցաւ Բ. Դրան ձեռք ա՛յն օրէն՝ երբ՝ աղբային ժողովին յանձնեց վերաքննութեան խնդիրը , զոր իր ազատ քրէկովը նուիրագործեց . թէ Սահմանադրութեան վերաքննութիւնը ազգին համար ա՛յն օրէն սկսեց , երբ ազգային ժողովը զանի որոշեց և իր վերաքննիչ Յանձնախումբն ընտրեց : Ուստի այն պղտոր տեսած յոտակ աղբիւր է որմէ և դու բլխեալ ես . սրբէ՛ աչքդ ու լա՛ւ դիտէ :

Ապշեցուցիչ հակասութիւն մը քեզ պիտի սարսուէ եթէ լաւ ուշ դնես սա օրինակին , զոր իբր օրինակ միայն կուտամ միտքս լաւ քացատրելու համար : Ի՞նչ կըսես երբ գող մը գողութեան յանցանքի համար դատապարտէ ուրիշ գող մը . միթէ միանդամայն ինքզինքը դատապարտած չ'ըլլա՞ր . մի և նոյն դատակիւիքը իրեն համար ալ չ'է՞ մի երբ իր գողութիւնն ալ ապացուցի : Արդ՝ ի՛նչ խորհեցան քունախորդքդ . — Եթէ սկզբունքը Սահմանադրութեան ձեռքն է , օրէնքը ժողովի՛ն ձեռքն է , բաւա-

կան է որ այն սկզբանց հակառակ չ'ըլլայ ըսին , և ի՛նչ ըրին . — փոխանակ քաղաքական ժողովէն առնելու վերաքննիչ յանձնախումբին անդամոց մէկ մասը ըստ ճիշդ տառին Սահմանադրութեան , Ընդհ. ժողովէն առին բոլորն ալ . փոխանակ քսան հոգիէ կազմելու յանձնախումբը ըստ տառին Սահմանադրութեան , եօթը հոգի բաւական համարեցին . փոխանակ 71 հոգիով ատեան բանալու , 51 ի իշուցին սյս թիւը՝ իբրև Պօլսի երեսփոխանաց մեծագոյն մաս : Եւ դո՞ւ ինչ ըրիր . — փոխանակ ընտրութեամբ 20 հոգիէ կազմելու քաղաքական ժողովը , առանց ընտրութեան Պատրիարքին յանձնեցիր 6 հոգիէ քաղաքական ժողով կազմել՝ բոլորովին հակառակ առաին Սահմանադրութեան . փոխանակ 71 հոգիով ատեան բանալու , ինչպէս որ կը հրամայէ Սահմանադրութեանդ տառը , նախ՝ ընտրելոց միայն մեծագոյն մասը ընտուել որոշեցիր և յետոյ՝ առանց մեծագոյն մասի և ո՛ր և է ներկայութեան թըւով ատեան բանալ որոշեցիր , և ին . և ին :

Եթէ անոնց որոշմունքն ապօրինաւոր են , քոյիննե՛րդ ալ ապօրինաւոր են , զի մի և նոյն արատն ունին ըստ քո վճռոյդ : Արդարեւ երե՛ս պէտք է կոյր կոչել զընկերդ երբ քու աչերդ հեռի են և շատ հեռի ամբժուի ենէ . արդարեւ ճակատ պէտք է իբր ապօրէն ետդարձնել քու նախորդացդ որոշմունքը երբ քոյիննե՛րդ ալ եթէ ոչ աւելի գո՛նէ մի և նոյն ապօրինաւորութեան մէջ են : Ես քու տեղդ ամիցայ այո՛ քու այդ վճռոյդ մաս-

նակցելու, վճիռ որ քու բոլոր որոշմունքդ ու տնօրէնութիւնքդ կը բեկանէ, վարչութեան բոլոր գործօղութիւնքդ իբր վիժած կ'անգոսնէ, և վերջապէս քեզ և քու գոյութիւնդ կը գատապարտէ, քու ծագումդ, քու գալուստդ իբր ապօրէն կը ջրէ, զի քու ընտրութեանդ որոշմունքն ու հրահանգները քու նախորդացդ ՅԱ ով նստած և այն ապօրէն համարված ատեաններուն մէջ տրվեցան, և դու, ապօրէն ծնունդ, ի՞նչ ես կեցեր օրէնսդրական ժողովին մէջ, դու՛րս ելիր:

Եթէ ճշմարիտ հարուած մը կայ ասի է, ինքնասպան հարուած, զոր դու ինքնին քեզի տուիր, որում ես չը համարձակեցայ ձեռն մխելու. եթէ սարսափելի հակասութիւն մը կայ ասի է, յորում ինքզինքդ նեանցիր, որմէ ես խորշեցայ:

Բայց գուցէ՝ տրված և ընդունած բացատրութիւններդ մոռնալով, պիտի ըսես թէ «ես այս քուէովս ետ դառնալ չ'որոշեցի, այդ նշանակութեամբ չը տուի քուէս, նորէն Գաղաքական ժողով և վերաքննիչ յանձնախումբ կազմել չ'է դիտաւորութիւնս, այլ վերաքննութիւնը շարունակել, բայց փոխանակ ծրագիրը վերաքննելու՝ նոյն իսկ Սահմանադրութիւնը պիտի վերաքննեմ, ինչպէս որ հարցի քանիցս անգամ, և կը յիշէք, թէ ո՛րն է վերաքննելի տետրակը, ծրագիր թէ սահմանադրութիւն. և վերջապէս մեծագոյն մաս մը որոշեց որ Սահմանադրութիւնը պիտի ենթարկվի վերաքննութեան և ո՛չ թէ ծրագիրը»:

է՛յ . . . քուէարկութեանդ ամենէն՝ զարմանալին ըսեմ՝ ուրիշ բառով չ'ըսելու համար, որոշմանդ ամենէն՝ աննշան կետը՝ ատ է: կետ մը որ տարիներով առաջ որոշված է, կետ մը որոյ համար բացված է ընդհ. ժողովն այս անգամ և դու կոչված ես յատկապէս նոյն որոշումն ի դորձ դնելու համար, կետ մը վերջապէս որ քու ինդրոց կարողին մէջ տարիէ մը ի վեր որոշեալ կը տիրէ: Ի՞նչ հարկ քու որոշմանդ, խա՞ղ են քու հաճոյիցդ ազգային գործերը, կամ թէ ի՞նչ ըսել կ'ուզես դարձեալ որոշելովդ: Կա՞յ չը գիտցող թէ արդէն մէ՞յ մը քննված ու ընդունված բանն է որ վերաքննութեան այսինքն վերստին քննութեան կենթարկվի. եղա՞ւ ըսող թէ Ծրագիրը ենթարկելու է վերաքննութեան և ո՛չ թէ Սահմանադրութիւնը: Ո՞վ չը գիտէ որ ամեն որ և է ծրագիրներու ուղածն ալ այսօր ձեռքերնիս եղած Սահմանադրութեան վերաքննութիւնն է, և ըրածնին առաջարկութիւններ են միայն, յատկապէս սերտեալ և ուսումնասիրեալ դիտաւորութիւններ, զոր քննութեանդ կը մատուցենն Սահմանադրութեան վերաքննութեան օժանդակելու համար, և զորոնք դու յետ քննութեան կարօղ ես մերժելու. բայց ի՞նչ իրաւունք ունիս չը քննելու:

Եթէ տարակոյս չը կայ որ ամենուս ալ ուղածն ու ըրածը Սահմանադրութեան վերաքննութիւնն է, ուրեմն տիրապէս անիմաստ է այդ որոշումդ, որում ես ամէցայ մասնակցելու:

Բայց պիտի ըսես «ես այդպէս չեմ ըմբռնեմ իմ որոշումս, հապա՛ փոխանակ ծրագիրը կարգալու՝ Սահմանադրութիւնը կարգալ և անոր վրայ ընել որոշեցի վերաքննութիւնը»:

Հոս կ'ամչնամ դարձեալ այդ որոշումդ քննելու և կը շփոթիմ թէ պակսիր բերնիս մէջ. բայց եթէ անձնական ըլլար գործը, բերան չէի բանար. բայց որովհետեւ գործըն ընդհանուրին է և խնդիրն ազգային և ինձ մասնապէս այնքան թանկագին որ կեանքս մաշած է անոր պատճառած մտքաուսմներու և տքնութեանց մէջ. և որովհետեւ քու որոշումներդ ազատ են և ես զանոնք քննելու աւելի իրաւունք ունիմ, զի իբրև ազգին կամքը կը ներկայացնես զանոնք, ներէ՛ և ընդունէ՛ դոնէ պահ մը որ իմ քննադատութիւնս ալ քիչ մ'աւելի ազատ ըլլայ իբրև ազգային անհատի մը կարծիք: Այս ազատութիւնը կ'ընդունիս դիտեմ, թէ ներսը և թէ դուրսը. պատասխանէ՛ ուրեմն. արդեօք Սահմանադրութիւնը պիտի կարգամ և զանի միայն պիտի քննեմ ըսելովդ՝ փակա՛նք դնել կը խորհէիր Ծրագրին վրայ. միթէ ժողովականք ազատ չէի՞ն անոր դիտաւորութիւններն ալ մէջ բերելու, անոր յօդուածներն ալ առաջարկել ինչպէս և այլ ո՛ր և է զրաւոր կամ բերանացի դիտաւորութիւն և աստի կամ անտի առեալ յօդուածներ քու քննութեան ատեանիդ առջեւ: Եթէ ասանկ խորհեցար, որոշումդ իմաստաւոր է տրամաբանօրէն բայց թըշ-

ուառապէս, զի ժողովականաց խորհելու, խօսելու և դիտաւորութեանց ազատութիւնը բռնաբարել կ'ենթադրէ: Այս ենթադրութիւնը դու չ'ունիս դիտեմ և ես վայրկեան մը չեմ կրնար խորհիլ թէ ունեցած ըլլաս, բայց ըրած որոշումդ կը ընայ հետեւիլ դժբախտապէս:

Իսկ եթէ Ծրագրին վրայ փականք դնել չէր միտքդ, Սահմանադրութիւնը կարգալ և վերաքննութիւնն անոր վրայ կատարելու որոշումդ ի՞նչ այլ նշանակութիւն ունի որ լուրջ և անծիծաղ կարենայ հանվիլ հասարակութեան առջև: Միթէ փոքրագոյն մասէն շատեր դիտել տուած չէի՞ն արդէն՝ թէ այս բժախնդրութիւնը անիմանալի է և տղայական, և ո՛րն ալ կարգաս մի և նոյն ճամբան կը տանի, որովհետեւ բոլոր ծրագիրներն ու աշխարհիս բոլոր սահմանադրութիւններն ալ կարգալու և բաղդատելու և անոնցմէ յօդուածներ մէջ բերելու իրաւունք ունիս: Միթէ Սրբազան Պատրիարքը նոյնը չը կրկնե՞ց քանիցս անգամ. բնկաւ յիշօղութեանէն այն կարճ ու կտրուկ խօսքը որ քու ատենադրութեանցդ երեւելագոյն էջը և գլխագրով գրելի անոր է՛ն կարկառուն տողը կը կազմէ. «Հայոց Սահմանադրութիւնը քառանկիւնի է չը քայլեր» ըսված խօսքի մը. Սահմանադրութիւնը չ'է այլ մեր միաքերն են քառանկիւնի՞ տուած պատասխանը: Բարձրաշնորհ Սրբազանին այս ազգու խօսքը՝ քու այս ընթացքիդ դէմ քննադատական խիստ խարազան մըն էր, որով ձաղկեցար և զոր չ'ըզգացիր:

4. 4. 1911

Արդ՝ խղճիս խորէն կ'ըսեմ . ժողովին պատուարժանութեանը համար՝ կրնայի՞ արդեօք առաջ ամաչելու ենթադրել թէ երեսփոխանաց մեծամասնութիւնը պարզամտութեամբ չը պիտի կրնայ կամ չարամտութեամբ չը պիտի ուզէ ըլլալնել թէ ո՞րն ալ կարողացի միևնոյն բանն է . և թէ մէկ երկու անձանց միայն պրպտած այս թըշու առ բծախնդրութեան մէջ իր համարումն ու իր քրէին արժէքը վտանգելու պիտի խոնարհի : Սակայն կատարված եղելութիւնը չը պատասխանեց ակնկալութեանն . և քրէարկութեան ընդունված կեանքին մէջ ի զօր կ'որոնեմ դոյզն նշոյլ հասարակ իմաստի որ կարենայ իմ այս պատրանքս փորձաւորել :

Հիշիք այսքանս քրէարկութեան ընդունված կեանք վրայ որ է Սահմանադրութեան վերաքննութիւնը . գանք հիմայ մերժեալ կեանքն որ է վերաքննութեան ծրագիրը :

Այս կեանք վրայ ալ իրաւունք չունէիր ըսի . և ամենեւին . վասն զի ծրագիրը չէր կրնար քրէի դրովիլ զի դեռ չ'էր քննված :

Այս ծրագրին համար հայի մը բռնեմ դիմացը՝ տես՛ս ո՞րքան դարձար . ի՞նչ այլակերպութիւններու մէջ մտար ելար . աստեղագրութիւններէդ պիտի խօսիմ քաղուածօրէն :

Զայս ծրագիրը նախ ընդունեցիր ընդհանուր կերպով . և սկսեցիր յօդուածոց քննութիւնը թաղական մատակարարութեան զխէն բտտառաջարկութեան վերաքննիչ յանձնախմբին : Յետոյ յանկարծ սխալեր եմ . ըսիր . պէտք է ետ դառ-

նամ և անոր ընդհանուր տրամադրութիւնը քննեմ : Մենք այս սրխալելու ընդունելով արձանագրեցինք . և դու դէպ մը յօդուածներ ներկայացուցիր իբրեւ ընդհանուր տրամադրութեանց վերաբերեալ կեանք . որոնք ի մի շունչ տապալեցան քննութեան առջեւ . և վէճը դոյզնեցաւ : Ասի չը յաջողեցաւ . ելար ծրագրին ծաղումը զընենելու . յանձնախմբին կազմութիւնը սողտանելու . պղտոր աղբիւրներ նշմարելու . և յաջողելու համար՝ անիմաստապէս պետական ըսված հարուածի մը չարտապտ խընդիր յարուցիր որոյ տակէն ալ գոնէ չը կրցար փառաւոր կերպով դուրս ելնել . անձնական կիրքեր մատնեցին ըզ քեզ և վէճը դոյզնեցաւ դարձեալ քու չուղած կերպովը : Երբ այս միջոցն ալ չը յաջողեցաւ . սկսար բացէն ամեն թերութիւն և ազտ դնել ծրագրին վրայ . չեմ ուզեր ըսիր . զի ուսպտական . բռնապետական և այլ չը գիտեմ ինչ դրութիւններ կը պարունակէ : Ես ասոնց ամենն ընդունեցի և յարձանագրութիւն անցուցի և լուռ ու հանդարտ քեզ կ'սպասէի քննութեան ասպարէզին մէջ ուր կետ առ կետ փաստերդ պաշտպանելով գուցէ կը յաջողէիր ծրագիրը մերժելու . իոկ դու անարիտպէս խոյս տուիր անկէ՝ գոցէն մերժելով ըզ ծրագիրը : Վերջապէս յաղթութիւն գոչեցիր . երբ մեծագոյն մաս մը՝ զոր կրնամ ըսել յանպատրաստից խարեալ պահ մը քու կողմը գտնվեցաւ : Յաղթանակ կարծեցիր ինչ որ պարտութիւն էր և կործանում բովանդակի-

վերջապէս ընկար յայն որդայթը զոր ծրագրին դէմ լարելով՝ երեւակայութեանդ մէջի մարդոց դէմ լարել կարծեցիր . ասնչափ խոր ընկար որչափ խոր փորեցիր գուրը . Ծրագիրը ջրած կարծելով՝ քու որոշմամբ քու հեղինակութիւնդ ջրեցիր . քու իշխանութիւնդ խորտակեցիր . քու կործանումը վրձուեցիր . զի Սահմանադրութեան ոգւոյն՝ արդարութեան դէմ մեղանչեցիր :

Ի՞նչ կ'ըսես այն դատաւորին որ ի լրոյ միայն դատապարտէ զամբաստանեալը . առանց լսելու և առանց քննելու ամբաստանելոյն արդարացուցիչ փաստերը : Արդարութեան պաշտօնեայ մը կրնայ սխալիլ իր քննութեան մէջ և մոլորիլ իր վճռովը արդարութեան առջեւ . ասի ներելի է . բայց արդարութեան հասնելու միջոց քննութիւնն ի գործ չը դնելը՝ աններելի զանցառութեան մեղք գործել է . զարդարութիւնն անգոտնել է . ուստի վրձիւնը բեկեալ է և նոյն վճռով դատաւորը անկեալ :

Ազգային անուան պատուարժանութեանը համար զոր կը կրէ՝ կ'ամաչեմ հաստատելու թէ սոյն դատաւորին նման է այսօր մեր ընդհանուր ժողովը իր մեծագոյն մասին մէջ՝ առանց քննութեան ծրագիրը մերժած ըլլալովը . և ցաւալի է կշռել թէ ի՞նչ համարում ու յարգ կը մնայ իր ըրած և ընելու որոշմանց վրայ : Չեմ իշխեր մտածել թէ ո՞ր զօրութեամբ համար տի պահանջէ վարչութեան ճիշդեցն և ո՞ր ասպահովութեամբ տի քննէ անոնց համարատուութիւ-

նը : Յաճախ կը սխալի . ստէպ եա կը դառնայ . այսուհետեւ հաստատ երաշխաւորներ պէտք են իր ընելու որոշմանց սխալ կամ անիրաւ չ'ըլլալուն :

Բայց գուցէ կրնայ ըսել . թէ իր այս որոշմամբ մերժած չը համարիր ծրագիրը . այլ ընթերցումը միայն Սահմանադրութեան վրայ ընել որոշած է և միանգամայն ծրագրէն ալ յօդուածներ քննութեան պիտի առնու : Ասի ըսել կ'ըլլայ որ ծրագիրն ալ պիտի քննէ յօդուած առ յօդուած՝ որպէս զի իր հաւանածներն ընտրէ . մենք ալ ըսած չ'էինք որ ծրագիրը գոց ընդունի այլ յօդուած առ յօդուած քննէ . հաւանածն ընդունի . չը հաւանածը փոփոխէ կամ մերժէ :

Ասի ըսել կ'ըլլայ որ մէկ կողմէն Սահմանադրութեան վերաքննութիւնը ընդունեց . և միւս կողմէն վերաքննութեան Ծրագիրը չը մերժեց . ըսել է բան մը չ'որոշեց . Պատճ : Հոս կը փայլի քրէարկութեան անիմաստութիւնն ու որոշման ոչընչութիւնը : Եթէ մի և նոյն ճամբան եկար . ի՞նչ էր հապա ա՛յդքան վէճերու զոհած նիստերը . ա՛յդքան ճիշդեղ ու պատրուտումներդ . ա՛յդքան երկունքը վերջապէս՝ որոյ արդիւնքն այդքան աննշա՛ն է և չնչին՝ կ'ամաչեմ ըսել որպէս ըզ ծնունդ երկնող լերին Առակաց . Եւ ընդէ՞ր այդ ծիծաղականը :

Իսկ ես՝ ժողովին պատուոյն համար՝ չեմ յուսար և չեմ ցանկար որ իր որոշմանը այդ մեկնութիւնը տայ և այդ ակեղցփեղ պատճառանաց դիմէ . զի իշխանական հե-

դիմադրութեան համար չի՞ք աւելի մահաբեր հարուած քան ծաղու հարուածը : լաւ է անիրաւութեամբ ստղտանիլ քան ծաղու : զի անիրաւութիւնը կիրք մը կ'ենթադրէ՝ իբր շարժառիթ՝ որ կրնայ մարիլ ու անցնիլ : իսկ ծաղրը ախմարութիւն կ'ենթադրէ որ է անդարմանելի : Անկում ընդ անկման՝ աւելի կը սիրեմ՝ զայն անկումն որ սարսափ կուտայ քան զայն որ ի ծիծաղ կը շարժէ :

Հուսկ յետին մեկնութիւն մ'ալ՝ որ ժողովինը չ'է և զոր ժողովը չ'ընդունիր գիտեմ, բայց անդամաց ումանց յղացած և բերնէն իսկ փախած, սա է, « ի՞նչ հարկ վերաքննութեան, գոհ ենք ձեռքերնիս եղած Սահմանադրութեանէն, ծրագիրը մերժելով սահմանադրութիւնն ընդունելիս այս կիմացնէ և այս էր բուն մտքերնիս » : Եթէ իրաւցնէ ատ էր ըստ ումանց՝ այդ որոշման անիմանալի կարծված խորին նշանակութիւնը, ատոր պատասխանը մենէ սպասելու չ'է, հասարակութեան առջեւ մենք կը պատկառինք զանի տալու :

Վերջապէս ի՞նչ որ ըսէ, ի՞նչ մեկնութիւն որ տայ և ո՞ր կողմ դառնայ, սարսափելի հակասութեան և անելանելի բաւղի մը մէջ կը գտնէ ինքզինքը այդ յաղթող մեծամասնութիւնը, և այս վիճակին նոյն իսկ ինքն եղած է պատճառ և ո՛չ այլ ոք : Նայելնք քիչ մը :

Առաջին ակնարկով և դուրսէն նայելով՝ գիւտնին անուշադրութեանէն յառաջ եկած կրնայ կարծվիլ եղելութիւնը. բայց երեւցածին պէս

չ'է ըստ իս : Գիւտնին անդամները և մասնաւորապէս այսօր ժողովին ղէկը բունօղ և ինծի միշտ սիրելի այն բարեկամ անձը՝ որ մանկութենէ անտի հզօր աշակից եղած է ինծի ազգային աշխատութեանց մէջ և որոյ ազատամիտ կորովն ու ազգասէր եռանդը շատուց ի փորձարկեալ են, կանուխ զգացին այդ մեծագոյն մասին անկանոն ընթացքը և քանիցս անգամ ցաւ յայտնեցին. մոռնալու չ'է ատենապետին այն ազգու խօսքը, այն զգուշարար ազգարարութիւնը ժողովին՝ թէ « օրինաւորութիւնը մեզ կ'ըսպաննէ, օրինամուրութիւնը մեզ պիտի խեղդէ » : Եւ ես միշտ սա իմաստով խորհուրդ տուած եմ գիւտնին մէջ. « կամ պէտք է ամենայն խստիւ վարվիլ ու առաջն առնուլ այս ընթացքին, եթէ մարթ է, կամ բոլորովին սանձարձակ թողուլ որ երթայ հասնի իր այս ծայրայեղութեան վերջին աստիճանը, զի երկու ծայրն ալ բարի է ազգին համար ». և ես գոհ եմ եղածէն, զի փոխանակ զազգը օրրելու պատիր յոյսերով թող ժողովին՝ զըլուխը պատի գայ և ազգին աչքերը բացվին :

Արդարութեան պատկառ կալու համար՝ չեմ կրնար միահամուռ դատել ժողովն ու ժողովականք առանց բացառութեան. ուստի երկու բառով պարտքս է քննել այն տարաբախտ քրէարկութեան մէջ փոքրագոյն մասին վիճակն ու դիտաւորութիւնը, և միանգամայն մեծագոյն մասին կերպարանեալ կացութիւնը : Քրէն յայտնի չ'է թէպէտ, սակայն ատենադրու-

թիւնք կը բաւեն խօսողաց տրամադրութիւնը յայտնելու և քրէնին գուշակելու :

Ես մինակ չ'եմ բողոքօղ, այլ պիտի նախ ի բաց առնում Տ. Երեմիա Գերաշնորհ եպիսկոպոսը որ զառաջինն բողոքեց՝ « քրէն չունիմ », ըսելով : յետոյ քրէնտուփէն ելած այն ճերմակ թուղթերը, զորոց թէպէտ հեղինակները միայն գիտեն իսկական նշանակութիւնը, բայց ներելի չ'է համարիլ իբրև անտարբերութիւն՝ և երեսփոխան մը զրօ նկատել ազգին է՛ն կարեւոր խնդրոյն մէջ. այլ իստահաւանելի է ենթադրութիւնը՝ թէ տեսակ մը բողոք կամ զգուշութիւն էր քրէնարկութեան մասնակցելու, իբր թէ ըսվէր՝ ես անպարտ եմ քու արեւնէդ : Մանաւանդ ի բաց առնուլ պէտք է Բարձրաշնորհ Պատրիարքին քրէնթուղթը որ տողեր կը պարունակէր և որ չը կարգացվեցաւ իսկ յատենի, բայց անշուշտ նոր խրատ մը, նոր ազգ մը, կամ նոր խարաղան մըն էր զգաստութեան :

Իսկ փոքրագոյն մասին քրէն ծրագրին կողմը՝ ուրիշ նշանակութիւն չ'էր կրնար ունենալ այլ միայն սա՛. անցած վէճերը գոցենք, վերաքննութիւնը շարունակենք իր բնական ընթացքովը ինչպէս որ ըսկըսված էր ծրագրին քննութեամբը : Այս փոքրագոյն մասը՝ իր օրինաւոր գովելի դիտաւորութեամբը և անկէ մղեալ թեթեւ ու ազմայ թերութիւն մը գործեց քրէնարկութեան մասնակցելովը փոխանակ ժուժկալելու :

Թէ յիշողութիւնները նորոգելու

համար ըլլայ, զի ամիս մը անցեր էր նախընթաց նիստէն ի վեր, թէ այն օրը առաջին անգամ եկող 10, 12 նորընտիր երեսփոխանաց խելամուտութեանը համար, և թէ քրէնարկելի կետերուն թերի բացատրութեանց լրմանը համար՝ մէկ քանի խօսք ուղղորներու դէմ ահեղ աղաղակներ փրթան մեծագոյն մասէն որք սոսկ քրէն կը գոչէին՝ բացատրութիւն մեկնութիւն լսել չ'ընդունելով, և քրէնարկելի կետերը՝ Սահմանադրութիւն կամ Ծրագիր բառերը միայն պիտի ըլլան ուրիշ բառ չենք ընդունիր գոչելով : Այս ընդհանուր աղաղակին բուն պահանջմանց առջեւ և խառն ի խառն ոտքի ելլելներու դէմ՝ փոքրագոյն մասը ժամանակ չ'ունեցաւ մտածելու թէ քրէնարկելի կետերուն և ո՛չ մէկին վրայ իրաւունք կար, և յանկարծուտ ըմբռնեալ՝ նոյնպէս և գիւտնը, նոյնպէս և ատենապետը որոյ ձեռքէն խոյս տուաւ պահ մը կառավարութեան սանձը, և քրէնարկութիւնը կատարվեցաւ մեծագոյն մասին հարկադրած բառերուն վրայ : կրքօղը կրցաւ բողոքել, չը կրցօղը ճերմակ թուղթ նետեց կամ անցաւ յայն կողմը որ փոքրագոյն մաս կազմեց 21 հոգիով, որ բողոքօղօք հանդերձ 28ի կը հասնի :

Իսկ 38 հոգիէ բաղկացեալ մեծագոյն մասը զոր ունեցաւ իրեն դէմ Ծրագիրը, լաւ գիտեմ որ մի և նոյն տրամադրութեան մէջ չ'է և մի և նոյն դիտաւորութեամբ չ'են տուած ամենքն իրենց քրէն : Եստեղ այս մասէն լաւ չ'ըմբռնելով խնդիրը, զի բացատրութիւնները

հիմնական չէին, շուտեալ շփոթեցան քրէարկութեան այն երկու կետերուն առջև, չը կրցան որոշել թէ ո՛րն է օրինաւորը, ո՛րն է ապօրէնը:

Բնականօրէն ասանկ կ'ըլլայ երբ երկու կետերն իրարու հակառակ իրար չը վանեն, երբ երկուքն ալ օրինաւոր ըլլան երկուքն ալ անհերքելի ուստի կարծելով կամ զգուշանալով թէ Սահմանադրութիւնը կամ անոր վերաքննութիւնը մերժած չ'ըլլայ, խոհեմութիւն համարեց Երազրին հակառակ կողմը քրէ տալ: Ով որ գտնվի այսպիսի երկակողմանի ընտրութեան առջև, նոյն շուտեալ կը պատահի իրեն, և մէկ կողմը կամ ի միւսը կը նետվի: Եթէ իս ստիպելին քրէ տալու անպատճառ, պայման կը դնէի երկու քրէ տալու մէկը մէկ կողմին, և միւսը մեկալ կողմին, երկուքին ալ այ կու տատայի, զի մէկին այ ըսելով միւսին ոչ ըսած ըլլալ անիմաստ էր և անընդունելի, զի մէկը մէկային տըրամաբանական հետեւութիւնն էր, զի մէկին ընդունելութիւնը կամ մերժումը մէկային ընդունելութիւնը կամ մերժումը կ'ենթադրէր փոխադարձապէս:

Ահա սոյն պատիր կացութեան մէջ գտնվեցաւ այն մեծագոյն մասին մեծագոյն մասը որ եթէ այսօր համրվի, չեմ յուսար որ նոյն թիւրն ունենայ. խորհրդածութիւնն արդէն յայտնած պիտի ըլլայ անոր իր վրիպումը:

Իսկ որք այս անիմաստ շարժման նախառիթ կ'անգնեցան կամ գիտութեամբ մասնակցեցան՝ դատա-

պարտեալ արդէն հասարակաց խորհին առջև՝ զղջացեալ են գուցէ չեմ կարող գուշակել, բայց հաւանօրէն իրենց խղճին առջև հաշիւն սկսած է բարոյական պատասխանատուութեամբ:

Այսու ամենայնիւ՝ ժողովը ունի այսօր իր առջև մեծագոյն մասամբ տրված վճիռ մը որ փորձանք է գլխուն. ի՛նչպէս ալ մեկնէ, ո՛ր ատեան ալ հանէ, ինքզինքը կը դատապարտէ: Եթէ Սահմանադրութեան վերաքննութիւնը ետ դարցուց, ազգին անգին ժամանակները մխեց. հասարակութեան յոյսը և տառապեալ թաղից ու գաւառաց ակնկալութիւնը խաբեց. ազգին առջև մեղանչեց. ուստի իրբեւ Ազգային ժողով՝ ընկաւ իշխանութենէ: Եթէ վերաքննութեան ծրագիրը մերժեց, անիրաւութիւն ըրաւ. արդարութեան ըսկըզբունքին դէմ Սահմանադրութեան առջև մեղանչեց. ուստի իրբեւ Օրէնսդրական ժողով՝ ընկաւ դարձեալ իշխանութենէ: Իսկ եթէ ասոնց ո՛չ մէկն ալ չ'ըրաւ, գոնէ անիմաստ քրէարկութիւն մ'ըրաւ որ նշանակութիւն չ'ունի, արդարանալու կողմ մը չ'ունի, որով իր որոշմանց արժէքը ոչնչացուց, իր հեղինակութիւնը ջրեց, Ազգին իր վրայ համարումը, վրատահութիւնը կորոյս, և մէկ խօսքով՝ ամենամահ հարուածն իրեն իր ձեռքովը իր քրէովը տուաւ. ուստի և զիւրովին դնաց:

Այս մեկնութեանց ո՛րը կրնայ թող ընդունի ժողովը. ես իր պատուարժանութեանը ո՛չ մէկը կրցայ վայելցնել, և ասոր համար է վեր-

ջապէս որ ամսթ զգացի իրբեւ երեսփոխան և բողոքեցի յանուն ընտրողաց զոր կը ներկայացնեմ:

Ներերևու է ինձ ուրեմն, զի եթէ այս զգացումն ունեցայ՝ կրկին կ'ընեմ՝ յանցա՛նքն իմն չ'է. եթէ շատեր չ'ունեցան միւսնոյն զգացումը կամ չը յայտնեցին, դարձեալ յանցանքն իմն չ'է. աղա՛տ են մարդիկ:


Չը սրտամտի՛ թող ժողովը այս համարատուութեանս դէմ, զոր կ'ընեմ ո՛չ թէ իր վրայ ազգային դատապարտութիւն հրաւիրելու մթոք, զի իր ամեն չ'ըրածն ու բողովը ընթացքը չ'են պատմածս, այլ ըրած մէկ որոշումը միայն քննեցի՝ ընտրողացս առջև բողոքս ու հրաժարումս արդարացնելու նպատակաւ և ստիպմամբ: Իրին կամ իր մեծագոյն մասին կը մնայ զինքն արդարացնել ազգին առջև: Ատենագրութեան մէջէն տող մը երկուք՝ իրբեւ հերքեալ վճիռ հանելով չ'է՛ որ կ'արդարանայ. քննութեան փաստերը պէտք է որ հերքէ: Եթէ մենք չ'ընէինք զայս քննադատութիւնը, ուրիշներ պիտի ընէին. կը պա՛կսին ազգին մէջ խորհող ու դատող գլուխներ. հընար էր լուեցնել հասարակաց բերան՝ ազգային օրագիրները, կամ հեռացնել ազգային վարչութեանց գլխէն այս անպակաս ըլլալու քննադատութեան օրհնեալ խարազանները:

Չայս համարատուութիւնս լսողները թո՛ղ ի՛նչ կ'ուզեն հետեւցընեն. ըստ իս անձնականապէս՝ այս քննութեանց եզրակացութիւնը ինձի համար Յուսահատութիւն է և Հրաժարում:

Յուսահատութիւն, զի համոզվեցայ որ այս ժողովը ալ չ'է կարող Սահմանադրութիւնը վերաքննել, հեղինակութիւն չը մնաց իր քով. և եթէ հասնի ալ բան մ'ընելու՝ կիսկատար թէ կատարեալ հոգ չ'է, անընդունելի է ազգին համար իրբեւ ապօրինութեան ծնունդ, և ուրիշ ժողով մը կամ ուրիշ մեծագոյն մաս մը պիտի յառնէ օր մը՝ ու չ'կամ կանխ, և ասոր ըրածը ջրելով իբր ապօրինաւոր՝ ըստ իւր տուած օրինակին իւր նախորդաց որոշման վրայ, նորէն պիտի սկսի վերաքննութիւնը, կամ այսօրվան մերժեալ համարված ծրագրով պիտի շարունակէ. և ասի ամենայն իրաւամբ: Լա՛ւ, բայց ո՛վ պիտի տուժէ այնքան ժամանակի կորուստըն ու այնքան յապաղմանց մնասոր. դարձեալ Ազգը... Ապերջանի՛կ Ազգ, որքան խարվեր ես քու սիրոյ տառերն անդուլ բերնի մէջ հողովօղններէն...:

Արդ՝ եթէ նախ քան զիս յուսահատողներ չը կան, ես զառաջին յոյսս կը կտրեմ՝ այս ժողովէն, և ամենայն պատասխանատուութիւն թօթափելով՝ պարտ անձին կը համարիմ՝ քաջվիլ անոր անգամակցութենէն, նախանձելով յառաջագոյն հրաժարողաց կանխատես խելացութեանը:

Չայս խոստովանութիւնս լուեցնեալք՝ հաշտ ակամբ տի տեսնէ ժողովը իմ հեռացումս կը մէջէն, նոյնպէս և զիս ընտրութեամբ պատուող ազգայինք, որք՝ եթէ ինձ ըզգայակից զիս սխալած չեմ կարծեր իմ խորհրդացս մէջ, պիտի ծախուհարեն իմ հրաժարումս: Իսկ եթէ



չը կրցայ զիրենց զգացումը ներկայացնել, դիւրին է իրենց ուրիշ երեսփոխան մ'ընտրել որ իրենց կարծեաց ճիշդ թարգմանն ըլլայ. չեմ կրնար ես ուրիշ կերպ ըմբռնել երեսփոխանի պաշտօնը :

Իսկ ինդհանուր ժողովին գալով իր այս դժուարին քայլին մէջ ըստ մեզ մէկ հատիկ ելք մը կայ իր առ-

ջեւ . և եթէ ունի բաւական քաջութիւն պատուելու զայն հատիկէ վարագոյրը զոր կիրք քաջած են իր աչացն առջեւ , յայնժամ իւր ազգասիրութիւնը կը ցուցնէ իրեն զայն մէկ հատիկ ելքը . դուրսէն խրատի կարօտ չ'է , ունի բաւական ազգասիրութիւն :

Բերա, 4 մայիս 1871 .

ՌՈՒՄԻՆԵԱՆ

*Կարողացաւ Կարգաւորել  
Եւ իր Գրքերը*



*Handwritten text at the top of the right page.*

ԳՐԱԳՐԱՆԻ	ԳՐԱԳՐԱՆԻ	ՍՈՑ. ԳՐԱԳՐԱՆԻ	ՍՈՑ. ԳՐԱԳՐԱՆԻ	ՍՈՑ. ԳՐԱԳՐԱՆԻ
1	1	1	1	1
18	18	18	18	18
12	12	12	12	12
17	17	17	17	17
0	0	0	0	0
20	20	20	20	20
22	22	22	22	22
11	11	11	11	11

## ՎՐԻՊԱԿ ՏՊԱԳՐԱԿԱՆ

<u>ԵՐԵՍ</u>	<u>ՍԻՒՆԱԿ</u>	<u>ՏՈՂ</u>	<u>ՍԻՍԼ</u>	<u>ՈՒՂԻՂ</u>
1	2	(երկու տեղ)	որ խօսի	որ պիտի խօսի
4	1	1	երեւակայիլա	երեւակայելն
5	2	18	վերաքննութիւնը	վերաքննութիւն
5	2	21	պիտի կատարվի	պիտի կարդացվի
6	2	15	օղնութեան	օղնութիւն
10	1	9	հրահանգները	վաւերացմունքը
11	2	28	յիշօղութենէն	յիշօղութենէդ
12	2	22	բացէն	դուրսէն
15	2	11	քննութեան	ընտրութեամբ



Small purple ink blot or mark.

5057

0001187

12017

ՀՀ Ազգային գրադարան



NL0001187